

բեամբ Սրբոյն Նիկողայոսի հայրապետին, աշխատութեամբ մեր եւ ա[րողական] Հանճար Յովնանեան վարդապետին եւ Պետրոս եւ Սարգիս մհի. վերականգնուաց տեղւոյն եւ ամենայն մի[աբանից]: Եւ եւն սոքա կրկին յիշատակի ի Սուրբ յերուսաղեմ ի դուռն Սրբոյն Յակոբայ Արքուդոյն ամենայն Հայոց, ի փրկութիւն հոգւոյ մերոց եւ ի վայելումն օրհնեալ ազգիս Հայոց. ի քվ. ՌՃՀԴ (=1725) ամին. վայելալից եւ ընթերցալից Աստուած ողորմի ասացիք ամենայն վերագրելոց. ամեն» (*) ։

Երուսաղեմական բեմեր. —

1720 ին Շղթայակիր իբրեւ ընտրեալ պատրիարք, Պոսէն գէպի Երուսաղեմ ճամբորդութեան ընթացքին, կը նորոգէ Հալէպի և Դամասկոսի աթոռապատկան հոգեւորներ և վանքը և նոր կառուածներ կը գնէ Հալէպի մէջ։

Իսկ 1740 ին Շղթայակիր երբ դարձեալ Պոլիս կը գտնուէր, կը վերանորոգէ Իւսկիւտարի Երուսաղեմատունը։

Դիւթաւոր այս շինութիւններէ զատ, տակաւին կրնայ բաւական երկարիւ շարքը նորաչէն սենեակներուն, որոնց յիշատակարաններուն համաձայն շինուած են Շղթայակրի կողմէ և կամ իր օրով զանազան նուիրատուներէ։ Կը մէջբերենք Սաւաւանի Երուսաղեմի պատմութենէն (էջ 749) ձեփարար Եղիա վարդապետի պիւրճախօս մէկ վկայութիւնը. — «Թիզ մը տեղ չի մնաց ուր չհպէին ճարտար բանուորներու ձեռքերն ու մատները, թէ Ս. Աթոռին և թէ մեր արտաքին վանքերու և թէ վաքըֆ միւլքերուն մէջ... և ես վերոյիշեալներով միասին 340 խուցեր ձեփեցին»։

Պահ մը եթէ նկատի չառնենք վանական և եկեղեցական այլ երեսներու վրայ Շղթայակրի մեծագործութիւնները, շինութիւններու այս ցանկը ինքնին պիտի բաւէր կազմելու իր գործին ապշեցուցիչ մեծութիւնը, որ մինչև այսօր իր նմանը չէ ունեցած Ս. Աթոռի դարաւոր պատմութեան մէջ։

Գ. Ս. Գ.

(*) Սոյն արձանագրութեան կոտորած մասին բաներ կ'ենտով նշանակած ենք։

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Դեր. Տեղապան Հայրաւորը Հոկտեմբերի ընթացքին հետեւեալ հեռագիրը դրկած է Ս. Արքուդոյ մեծ բարեբար վսեմ. Գալուս Պէյ կիւլպէնկեանին։

ՎՍԵՄ. ԳԱԼՈՒՍՑ ՊԵՅ ԿԻՒԼ ՊԵՆԿԵԱՆ
Լիզպոն

Կիւլպէնկեան Գերդասեանի նշանակող օտարեկան հոգեհանգիստը կատարուեցաւ այսօր։ Հանգստեան Ս. Պատարագ մատուցուեցաւ ի հանգիստ հազոց Ձեր սիրեցեալ ծնողաց, եւ կատարուեցաւ աղօթք Ձերդ Վսեմութեան առօրջութեան եւ արեւշատութեան համար։

ՏԵՂԱՊԱՆ Ս. ԱԹՈՐՈՅ

ԵՂԻՇԷ ՎՐԴ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

21 Հոկտ. 1950



Ի դիմաց Տեղապան Հօր սոյն հեռագրին ստացուած է Վսեմ. Բարեբար Գալուս Պէյ կիւլպէնկեանին հետեւեալ հեռագիր-պատասխանը։

ԳՆԲ. Տ. ԵՂԻՇԷ ՎՐԴ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
Տեղապան Ս. Արքուդոյ
Երուսաղեմ

Շնորհակալութիւններ Ձեր հեռագրին համար։ Իմ ամենաշեղծ օղջոյններս ընկունեցէ եւ հաղորդեցէ նաեւ պատուաւան Միաբանութեան։

ԿԻՒԼ ՊԵՆԿԵԱՆ

Լիզպոն, 26 Հոկտ. 1950



ՆՈՐ ԺԱՌԱՆԳԱՆՈՐԸՈՐՆԵՐ

Ժողովուրդային վարժարանի ներկայ արեւելանին համար արտասանման են սաներ ընտրելու գործը, Պատ. Տնօրէն Ժողովոյ կողմէն, յանձնուեցաւ Ս. Արքուդոյ միաբաններէն Հոգ. Տ. Պարգեւ Վրդ. Վրթանեսանին։

Հոգեւորն Հայր այս նպատակով այցելած է Դամասկոս, Պէյրութ եւ Ջանիէ, ամենուրեք պատարագած եւ ներշնչող քարոզներով մխիթարած տեղւոյն հաւատացեալ հայ

հասարակութիւնը: Իսկ Պէրուքի մէջ, Վարալայ Ս. Խաչի տօնին տօնիւ ծայրագիւղէն ելնէ իր հոգեւոր խօսքն ու պատգամը տուած է մերազն հաւատացեալներուն:

Իրեն դիմող բազմաթիւ քեկամտներէն ընտրած է տաս ժամիս եւ քաղցրածայն պատանիներ, որոնք մաս պիտի կազմեն ժառ. Վարժարանի այս տարւածն զաստեղծանին:

Մասնակցած է նոյնպէս Նորին Ս. Օծուքին Տ. Տ. Գարեգին կաթողիկոսի եւ ռոպայէն վերադարձի ընկուեցեալներէն: Մեկ ու կէս ամսուան բացակայութենէն յետոյ, Հոգ. Հայրը կը վերադառնայ Ս. Արք. գլուխ իր գործին, յաջողութեամբ պատկերի վերջ իր առաքելութիւնը:

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

● 1 Հոկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գարուբիւն, մեր վերնատան մատարան մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Գարուբիւն Վրդ. Մուշեան:

— Բետ-միջօրէի ժամը 3ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Պր. Կարպիս Հինդիւնի վանական կալուածներու խնդրով Խորաշէ մեկնեցաւ:

● 6 Հոկ. Ուրբ. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը պաշտօնեցան Ղպտիններու Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ, երթուղարձի պաշտօնական թափօրներուն և արարողութեանց կը նախապահէր Հոգ. Տ. Սուրէն Քէմհանեան:

● 7 Հոկտ. Եր. — Մերայն Գեորգայ գորավարին. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Աստղիկ Վրդ. Ղազարեան: Բարոյեց Հոգ. Տ. Հայկակոսէն Վրդ. Արքայանման: Բետ Ս. Պատարագի Ղպտոյ կողմէ եղաւ ընդունելութիւն վանքի տեսչարանին մէջ, Թափօրներուն և արարողութեանց կը նախապահէր Հոգ. Տ. Սուրէն Քէմհանեան:

— Բետ-միջօրէի ժամը 2ին, նախազանութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի հոգեւոր վարդապետ հայրեր պաշտօնական թափօրով իջան Ս. Գարուբիւն Տաճար: «Հրաշափառ» ի հանդիսաւոր մուտքի արարողութիւնէն ետք, թափօրը ուղղուեցաւ Բրիտանի Ս. Գերուստիէն և ապա Բարձրացաւ մեր վերնատան մատարան ուր պաշտօնեցաւ երեկոյեան ժամերգը և նախատօնակը, որմէ ետք կատարուեց նորինական Սրբատեղեաց այցելութիւն, կոյեան թափօրը:

● 8 Հոկտ. Կիր. — Վարալայ Ս. Խաչին. առաւօտեան ժամը 5ին վարդապետ հայրեր, նա-

խաղանութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի պաշտօնական թափօրով իջան Ս. Գարուբիւն Տաճար: Առաւօտեան ժամերգութիւնէն յետոյ, հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Բրիտանի Ս. Գերուստիէն վրայ, եպիսկոպոսական խոր ի զուլիս պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան: Ս. Պատարագէն ետք, հոգեւոր վարդապետ հայրեր, պաշտօնական թափօրով վերադարձան Մայրավանք:

● 11 Հոկտ. Դշ. — Բետ-միջօրէի ժամը 3ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգեւոր Տ. Տ. Բարդէն և Գարուբիւն վարդապետաց, ինչպէս նաև Պր. Կարպիս Հինդիւնի, Խորաշէն Ս. Աթոռ ժամանեց:

● 12 Հոկտ. Եշ. — Ի զիմաց Գեր. Տեղապահ Հոր, Հոգ. Տ. Աստղիկ Վրդ. Ղազարեան ընկերակցութեամբ Պր. Կարպիս Հինդիւնի, ներկայ գտնուեցաւ քաղաքի մէջ նոր բացուող Գալիական Հիւանդանոցի բացման հանդէսին «Հաւախօսի» վանքին մէջ (Սիոնի շրջափակ):

● 13 Հոկտ. Ուրբ. — Բետ-միջօրէի ժամը 4ին, Գեր. Տ. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի վանական գործերով Ամման մեկնեցաւ:

● 15 Հոկտ. Կիր. — Ս. Պատարագը Ս. Գարուբիւն Մայր Տաճարին մէջ մատուցեց Հոգ. Տ. Բարդէն Վրդ. Ապատեան:

● 19 Հոկտ. Եշ. — Բետ-միջօրէի ժամը 3ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Գորգի վանուց առժամայ տեսուչ Հոգ. Տ. Բարդէն Վրդ. Ապատեանի, Խորաշէ մեկնեցաւ:

● 20 Հոկտ. Ուրբ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը կատարուեցան Ս. Գարուբիւն Մայր Տաճարին մէջ, նախազանութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

● 21 Հոկտ. Եր. — Մերայն Բարձրացաւ վարդապետաց մերայն. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գարուբիւն Մայր Տաճարին մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողոսեան:

Բետ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեւոր գործերուն հանդիսաւոր պաշտամունք, ի հանդիստ հոգեւոր Ս. Արքայայն մեծանուն Բարեւար Վսեմ. Գալուս Պէյ Կիւլէնկեանի ծնողաց Սարգիս եւ Տիմուր ի Կիւլէնկեան գերդաստանի համայն ցնցեցելով:

● 22 Հոկտ. Կիր. — Ս. Պատարագը Ս. Գարուբիւն Տաճարի մեր վերնատան մատարան մէջ մատուցեց Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գազանեան:

● 28 Հոկտ. Եր. — Ս. Աւետարանեցան. Ս. Պատարագը մատուցուեցաւ Հայապատկան Ս. Գորգի հանդէս աւետարանի եկեղեցին: Ս. Գարուբիւն Տաճարի զանիթի մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Գարգի Վրդ. Վրթանէսեան:

● 29 Հոկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գարուբիւն Մայր Տաճարին մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Գարուբիւն Վրդ. Մուշեան: